COVID-19-ի դեմ պատվաստման մասին փաստեր. հղիություն և կրծքով կերակրում

ԻՆՉՈ՞Ի ՊԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ

- **Պատվաստումը ԼԱՎԱԳՈՒՅՆ միջոցն է՝ պաշտպանելու ձեր նորածնին** COVID-19-ի հետևանքով առաջացող լուրջ առողջական խնդիրներից: Երբ դուք պատվաստված եք, COVID-19-ից պաշտպանվածություն եք փոխանցում ձեր երեխային նույնիսկ նախքան նրա ծնվելը:
- **Պատվաստումը նվազեցնում է հղիության ընթացքում COVID-19-ով ծանր հիվանդանալու վտանգը:** COVID-19 ունեցող հղի մարդիկ ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան և կհոսպիտալացվեն կամ վաղաժամ կծննդաբերեն, քան COVID-19 չունեցողները:
- **COVID-19-ի դեմ պատվաստանյութը թարմացվել է՝ պաշտպանելու COVID-19-ի ներկայումս շրջանառվող ենթատեսակներից:** Պատվաստանյութը խորհուրդ է տրվում հղիության և կրծքով կերակրելու ընթացքում մայրերի առողջության պահպանման բոլոր խոշոր կազմակերպությունների կողմից:

Ե՞ՐԲ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Կարևոր է ժամանակին ստանալ COVID-19-ի դեմ ձեր պատվաստանյութերը, երբ դուք հղի եք:

- Դուք կարող եք ստանալ COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութը **ձեր հղիության ցանկացած փուլում կամ երբ կերակրում եք կրծքով:**
- **Դուք կարող եք COVID-19-ի դեմ պատվաստնյութը ստանալ հղիության ընթացքում խորհուրդ տրվող այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ**, ներառյալ՝ գրիպի, tdap-ի (փայտացում, դիֆթերիա և կապույտ հազ) և RSV (շնչառական սինցիտիալ վիրուսի) դեմ պատվաստանյութերը:

ԻՆՉՈ՞Ի ԵՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐՆ ԱՊԱՀՈՎ ՀՂԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

- Հղիության ընթացքում պատվաստված մարդկանց ուսումնասիրությունները և անվտանգության հսկողությունը (մոնիտորինգը) ցույց են տվել, որ հղիության ընթացքում բարդությունների կամ երեխայի մոտ բնածին արատների վտանգը չի մեծացել:
- COVID-19 պատվաստանյութերից և ոչ մեկը չի պարունակում կենդանի վիրուս: Պատվաստանյութերը չեն կարող COVID փոխանցել ձեզ կամ ձեր երեխային:

Եթե հարցեր ունեք, խոսեք ձեր բժշկի հետ: Դուք կարող եք նաև զանգահարել 1-866-626-6847 համարով, հաղորդագրություն ուղարկել 855.999.8525 համարին, էլ. նամակ ուղարկել ContactUs@mothertobaby.org հասցեին կամ զրույց սկսել mothertobaby.org/ask-an-expert հղմամբ:

ՁԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՌԱՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՓԱԿԻ ՁԵՐ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

- Եթե դուք ապահովագրություն չունեք կամ ունեք օգնության կարիք՝ գտնելու, թե որտեղ կարող եք ստանալ ձեր COVID-19-ի պատվաստանյութը, այցելեք **publichealth.lacounty.gov/vaccines** և սեղմեք GET VACCINATED-ի («ՊԱՏՎԱՍՏՎԵՔ») վրա կամ զանգահարեք **1-833-540-0473** համարով առավոտյան 8:00-ից երեկոյան 8:00-ը: Դուք կարող եք նաև զանգահարել 2-1-1 կամ հարցնեք ձեր բժշկին:
- Պատվաստվելիս ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:
- Տանն արվող պատվաստումները նույնպես հասանելի են: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք VaccinateLACounty.com և սեղմեք In-Home Vaccines-ի («տանը տրվող պատվաստանյութեր») վրա: